ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ՄԱ- 85-2018

ք. Գյումրի «8» 02 2018թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ակտիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 650000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Պայմանագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	«ԱԿՏԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 9	ք. Երևան, Արզումանյան 4/27,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	հեռ.՝ 39-19-95
ՀՀ 900011018505	«Անելիքբանկ» ՍՊԸ
ՀՎՀՀ 02586282	հ/հ 11800123758500
	ՀՎՀՀ 01240876
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն
Վ. Էլոյան	Գ.Հակոբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 8 » 02 20 թ. կնքված
ՍՊ-ՄԱ -27-2018 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ձեռք բերվող աշխատանքի անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1.	22451240-1	Բլանկներ	հատ	100	100000	1000	Աբովյան 9	I-II եռամսյակ
2	22311600-1	Շնորհավորական բացիկներ	հատ	700	245000	350		
3.	22811140-1	Նշումների տետրեր	հատ	13000	195000	15		
4	22811140-2	Նշումների տետրեր	հատ	11000	110000	10		

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ		
Բլանկներ		
Նախարարի ձևաթուղթ	Թուղթ օֆսեթ 90 գ/մ2 /Fedrigone/, սպիտակությունը՝ 98 %, չափսը՝ 210 x 297 մմ, տպագրությունը՝ 4+0: Ձևաթղթի վերևի ձախ մասում՝ ՀՀ զինանշանի ոսկեփայլ, եռաչափ դաջվածք: Ոսկեգույն զինանշանի կողքին մեծ չափսի տառերով և թավ տառատեսակով (bold) գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ», երկրորդ տողում՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ», երրորդ տողի կենտրոնում՝ «ՆԱԽԱՐԱՐ» բառերը: Ներքևի տողի կենտրոնում ավելի փոքր տառատեսակով՝ «MINISTER», հաջորդ տողում՝ «OF SPORT AND YOUTH AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA»: Հաջորդ տողի կենտրոնում գրված է «МИНИСТР», ներքևում՝ «СПОРТА И ПО ДЕЛАМ МОЛОДЁЖИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»: Զինանշանի ներքևի մասում՝ 5 մմ հեռավորության վրա 200 մմ երկարությամբ ոսկեփայլ հորիզոնական •ծի դաջվածք, որին հաջողդող տողի ձախ անկյունում՝ «___» _____ 201 թ. № _____ նախատեսված ամսաթվի, ամսվա և տարեթվի, ինչպես նաև գրության հաշվառման համար: Նույն ուղղությամբ աջ անկյունում՝ «ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9», հաջորդ տողում՝ «9 Abovyan St., 0001 Yerevan, RA», հաջորդ տողում՝ «Ул. Абовяна 9, 0001-Ереван, РА» բառերը: Նույն ուղղությամբ հաջորդաբար երեք տողերի վրա՝ «T/f : (+37411) 526-529, e-mail: msy@msy.am, website: www.msy.am» բառերը: Ձևաթղթի կենտրոնական մասում՝ գունավոր, ստվերային տեսքով, նախարարության տարբերանշանը: Ձևաթղթի նմուշների տրամադրում թղթային և էլեկտրոնային ձևով: Պահանջվող ձևաթուղթը կատարողի կողմից ձևավորվելուց և տպվելուց հետո համաձայնեցնել պատվիրատուի (ստացողի) հետ	*300հատ*
Աշխատակազմի ղեկավարի ձևաթուղթ	Թուղթ օֆսեթ 90 գ/մ² /Fedrigone/, սպիտակությունը՝ 98 %, չափսը՝ 210 x 297 մմ, տպագրությունը՝ 4+0: Ձևաթղթի վերևի ձախ մասում՝ ՀՀ զինանշանի ոսկեփայլ, եռաչափ դաջվածք: Ոսկեգույն զինանշանի կողքին մեծ չափսի տառերով և թավ տառատեսակով (bold) գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ», երկրորդ տողում՝ «ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ», երրորդ տողի կենտրոնում՝ «ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ» բառերը: Ներքևի տողի կենտրոնում ավելի փոքր տառատեսակով՝ «HEAD OF	*700 հատ*

	STAFF», հաջորդ տողում՝ «MINISTRY OF SPORT AND YOUTH AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA»: Հաջորդ տողի կենտրոնում գրված է «РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА», ներքևում՝ «МИНИСТЕРСТВА СПОРТА И ПО ДЕЛАМ МОЛОДЁЖИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»: Զինանշանի ներքևի մասում՝ 5 մմ հեռավորության վրա 200 մմ երկարությամբ ոսկեփայլ հորիզոնական •ծի դաջվածք, որին հաջողդող տողի ձախ անկյունում՝ «___» _____ 201 թ. № _____ նախատեսված ամսաթվի, ամսի և տարեթվի, ինչպես նաև գրության հաշվառման համար: Նույն ուղղությամբ աջ անկյունում՝ «ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9», հաջորդ տողում՝ «9 Abovyan St., 0001 Yerevan, RA», հաջորդ տողում՝ «Ул. Абовяна 9, 0001 Ереван, РА» բառերը: Նույն ուղղությամբ հաջորդաբար երեք տողերի վրա՝ «T/f : (+37411) 526-529, e-mail: msy@msy.am, website: www.msy.am» բառերը: Ձևաթղթի կենտրոնական մասում՝ գունավոր, ստվերային տեսքով, նախարարության տարբերանշանը: Ձևաթղթի նմուշների տրամադրում թղթային և էլեկտրոնային ձևով: Պահանջվող ձևաթուղթը կատարողի կողմից ձևավորվելուց և տպվելուց հետո համաձայնեցնել պատվիրատուի (ստացողի) հետ	
Շնորհավո- րական բացիկներ	Ալ կարմիր գույնի, Չափսը՝ 200 x 100 մմ, մեկ ծալք, թուղթը՝ դեկորատիվ, թավշյա ծածկույթով «Պլայկ», ալ կարմիր գույնի, տպագրությունը՝ թափանցիկ լաքապատ ծածկույթ 0,15 միկրոն բարձրությամբ, բացիկի երեսամասին՝ լաքապատ մակերեսով ՀՀ զինանշանի եռաչափ պատկերը և «ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար» տեքստը: Բացիկի նմուշների տրամադրումը՝ թղթային ձևով: Պահանջվող բացիկը կատարողի կողմից ձևավորվելուց և տպվելուց հետո համաձայնեցնել պատվիրատուի (ստացողի) հետ:	*350 հատ*
Նշումների տետր	Օրատետր՝ 17 x 24 սմ չափսի (ամենօրյա գրառումների գրքույկ), նշումների սեղանի գիրք՝ շվեյցարական (կամ համարժեքը) բնական կաշվե կազմով, կազմը՝ եզրակարված, շապիկի կենտրոնում պատկերանշանի (լոգոտիպ) պատկերով, (ոսկեփայլ/արծաթափայլ) դաջվածք, շապիկի ներսի երկու կողմերը (ֆորզաց, ծածկվում են 140 գր/մ^2 դեկորատիվ 5 % դեղին թղթով, միջուկի թուղթը՝ 90 գ/մ ^{2}, 5 % դեղին երանգով, տպագրությունը՝ 1+1: Միջուկի էջերի քանակը՝ 352, միջուկի էջերի ստորին աջ անկյունում պատկերանշանի (լոգոտիպ) պատկերով, միջուկի կողային մասերը՝ ոսկեփայլ/արծաթափայլ	*15 հատ*
Նշումների տետր	Օրացույց սեղանի՝ 14 x3 7 սմ չափսի (շաբաթյա գրառումների գրքույկ), նշումների սեղանի գիրք, շվեյցարական (կամ համարժեքը) բնական կաշվե կազմով, կազմը եզրակարված, շապիկի կենտրոնում պատկերանշանի (լոգոտիպ) պատկերով (ոսկեփայլ/արծաթափայլ) դաջվածք, շապիկի ներսի երկու կողմերը ծածկվում են 285 գր/մ^2 Fedrigone դեկորատիվ թղթով, միջուկի թուղթը՝ 90 գ/մ^2, 5 % դեղին երանգով, տպագրությունը՝ 1 + 1: Միջուկի թերթերը կարվում են մետաղյա գալարներով, զսպանակով: Միջուկի էջերի քանակը՝ 120, միջուկի էջերի ստորին աջ անկյունում՝ պատկերանշանի պատկերով: Օրացույցի միջուկի կողային մասերը՝ ոսկեփայլ/արծաթափայլ	*10հատ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011018505
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար

_____ Վ. Էլոյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱԿՏԻՍ» ՍՊԸ
ք. Երևան, Արզումանյան 4/27,
հեռ.՝ 39-19-95
«Անելիքբանկ» ՍՊԸ
հ/հ 11800123758500
ՀՎՀՀ 01240876

Տնօրեն

_____ Գ.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված № 2
2018 թ. փետրվար 8-ին կնքված
№ ԱՊՁ-ՄՄ-88-2018 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աճող. Հազ. ՀՀ դրամ

Աշխատանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ընդամենը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
1	2	3	4=(5;16)	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1..	22451240-1	Բլանկներ	100.00		10.00	10.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00	100.00
2	22311600-1	Շնորհավորական բացիկներ	245.00		24.50	24.50	245.00	245.00	245.00	245.00	245.00	245.00	245.00	245.00	245.00
3	22811140-1	Նշումների տետրեր	195.00		19.50	19.50	195.00	195.00	195.00	195.00	195.00	195.00	195.00	195.00	195.00
4	22811140-2	Նշումների տետրեր	110.00		110.00	110.00	110.00	110.00	110.00	110.00	110.00	110.00	110.00	110.00	110.00
Ընդամենը			650.00		164.00	164.00	650.00	650.00	650.00	650.00	650.00	650.00	650.00	650.00	650.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011018505

ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Ելոյան

Լիազորությունն ունի՝ 5

ԿԱՏԱՐՈՂ

«ԱԿՏԻՍ» ՍՊԸ

ք. Երևան, Արզումանյան 4/27

հեռ.010 52 53 01

«Անելիք Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 4190012756500

ՀՎՀՀ 01240876

Տնօրեն՝ Ս. Հակոբյան

Լիազորությունն ունի՝

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.